ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

(1-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22.02.2024թ **Արտաշատ համայնք**

Սույն թվականի փետրվարի 22-ին ժամը 12:00 ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի երկրորդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումը(1-ին հանրային քննարկում):

Մասնակցում էին՝ Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Խաչիկ Պողոսյանը, Շահումյան բնակավայրի վարչական ղեկավար Սերժիկ Բաբայանը, «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ–ի գլխ. տնօրեն Էդուարդ Մարգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ: Հանրային քննարկումը վարեց Խ.Պողոսյանը:

Նա հանդես եկավ բացման խոսքով.

Խաչիկ Պողոսյան

- Հարգելի ներկաներ, Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական սահմաններում «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը ցանկանում է իրականացնել հանքարդյունահանման աշխատանքներ ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասում: Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրության պատշաճ իրազեկում: Հայտնում եմ, որ այս քննարկումն իրականացվում է արդեն իսկ փոփոխված օրենսդրությամբ, ըստ որի կայանալու է երկու հանրային քննարկում: Խոսքը փոխանցում եմ Շահումյան բնակավայրի վարչական ղեկավար Սերժիկ Բաբայանին:

Սերժիկ Բաբայան.

- Շնորհակալություն: Ողջունում եմ բոլորիդ: Տեղեկացնում եմ, որ Շահումյան բնակավայրում «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը արդեն իսկ իրականացնում է հանքարդյունաբերություն և բնակավայրի ու կազմակերպության միջև հաստատվել են սերտ հարաբերություններ: Անհրաժեշտության դեպքում «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը մշտապես աջակցել է բնակավայրին, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում և ողջունում նոր նախաձեռնությունը:

Էդուարդ Մարգարյան.

- Շնորհակալություն պարոն Բաբայան: Ողջունում եմ ներկաներին, հանրային քննարկումը վերաբերում է ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին: Նշված տարածքի ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ: Քննարկվող տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պաշարներն ընդգրկող մակերեսը մոտ 40 հա է: Օգտագործվելու է Շահումյանի արտադրահրապարակում առկա լվացման-տեսակավորման կայանը:

Խաչիկ Պողոսյան.

- Իհարկե, ուսումնասիրության քննարկումների ընթացքում անդրադարձել ենք, սակայն խնդրում նորից ներկայացրեք հանքավայրի՝ Արաքս գետից հեռավորության և նմանատիպ այլ տեղեկություններ:

Էդուարդ Մարգարյան.

- Քննարկվող տարածքը Արաքս գետից հեռու է տարբեր հատվածներում մոտավորապես 60-120 մ, գտնվում է այսպես կոչված «վալ»-ից հետ՝ դեպի բնակավայր:

Խաչիկ Պողոսյան.

- Խնդրում եմ ներկայացրեք հաստատված պաշարների քանակը և տարեկան արդյունահանման նախատեսվող ծավալները, և վերականգնվող ե՞ն, թե՞ ոչ:

Էդուարդ Մարգարյան.

- Պաշարները վերականգնվող չեն: Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել 20 տարվա ընթացքում՝ տարեկան մոտավորապես 80 000- 100 000 խմ ծավալով:

Խաչիկ Պողոսյան.

- Ինչպիսի բնապահպանական միջոցառումներ եք նախատեսում իրականացնել՝ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Էդուարդ Մարգարյան.

- Օրենսդրությամբ սահմանված բոլոր միջոցառումները նախատեսված են, որոնք կներկայացվեն ծրագրում 2-րդ հանրային քննարկման ժամանակ: Նշեմ, որ կազմակերպությունն օգտագործելու նոր տեխնիկաներ, որոնք մթնոլորտի աղտոտվածություն գրեթե չեն առաջացնում: Անհրաժեշտության դեպքում կօգտագործվեն ջրցան մեքենաներ:

Խաչիկ Պողոսյան.

- Քանի որ նշեցիք, որ պաշարները վերականգնվող չեն, այդ դեպքում առաջացած փոսերի վերաբերյալ ի՞նչ աշխատանքներ եք նախատեսում:

Էդուարդ Մարգարյան.

- Իրականացվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքներ, ինչի համար ընկերությունը վճարներ է փոխանցում պետությանը:

Խաչիկ Պողոսյան.

- Տեղեկացնում ենք, որ մեքենաների գերբեռվածությունից խուսափելու համար, որի հետևանքով վնասվում են ճանապարհները, անհրաժեշտ է, որ հանքվայրից դուրս եկող մեքենաները կշռվեն, ինչպես նաև ասֆալտբետոնյա ծածկույթով ճանապարհ դուրս գալուց առաջ լվացվեն, որպեսզի չաղտոտվեն ճանապարհները:

Էդուարդ Մարգարյան.

- Ավտոմեքենաների կշռումը արդեն իսկ կարգավորված է օրենսդրությամբ, և դրանց գերբեռվածությունը բացառված է, իսկ լվացման համար տեղեկացնում եմ, որ միջպետական ճանապարհին հարակից տարածքում՝ Շահումյանի արտադրահրապարակում, որը տիրապետում է մեր կազմակերպությունը, առկա է համապատասխան ջրօգտագործման թույլտվությամբ խորքային հոր, որից վերցված ջրով պարտադիր լվացվում են մեր մեքենաները:

Խաչիկ Պողոսյան.

- Առաջարկում ենք ներկայացվող ծրագրում ներառել համայնքին սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակներում համայնքին ճանապարհների բարեկարգման համար նախատեսված տեխնիկայի տրամադրում, ինչպես նաև նախատեսվող համապատասխան օրենսդրական

փոփոխությունների շրջանակներում բնապահպանական վճարի՝ առնվազն 10%-ի մասհանում համայնքին:

Էդուարդ Մարգարյան.

- «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը միշտ պատրաստ է օրենսդրությամբ սահմանված և իր պարտավորությունների շրջանակներում, ինչպես նաև կամավորության սկզբունքով, աջակցելու համայնքին և գտնվել համայնքի կողքին:

Խաչիկ Պողոսյան.

- Շնորհակալություն: Եթե, այլ հարցեր և առարկություններ չկան, ապա այսօրվա հանրային քննարկում համարենք կայացած և փաստենք, որ քննարկման մասնակիցները տալիս են իրենց դրական գնահատականը ներկայացվող ծրագրին: Յուրաքանչյուր տնտեսական նախաձեռնություն ողջունելի է, ինչը համապատասխանում է օրենսդրությանը և նվազագույն վնասներ է հասցնում՝ մասնավորապես շրջակա միջավայրին: Սպասենք 2-րդ հանրային քննարկմանը, որին ներկա են լինելու «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետները, ովքեր առավել մանրամասն կներկայացնեն նախատեսվող ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը: Շնորհակալություն բոլոր ներկաներին: Յտեսություն:

Հանրային քննարկման վարող՝

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի

գլխավոր մասնագետ Խաչիկ Պողոսյան

Նախաձեռնող՝

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարգարյան